Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Արտաքին քաղաքականության ոլորտ.

Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման, համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ և և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացմանը՝ Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաներ մուտքի ապահովմանը, դեպի Հայաստան և Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացմանը:

Համաձայն ՀՀ կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագրի և դրանից բխող հնգամյա միջոցառումների ցանկի՝ ՀՀ ԱԳՆ գործունեության նպատակներն ու հիմնական թիրախներն են՝

- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման շուրջ բովանդակային բանակցությունների լիարժեք վերսկսմանը և ծավալմանը՝ ուղղված Արցախի կարգավիճակի հստակեցմանը միջազգային իրավունքի սկզբունքների, մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքի և «անջատում հանուն փրկության» բանաձևի հիման վրա:

- Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության հավելյալ միջազգային երաշխիքների ձևավորմանը:

- Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդների ազատ արձակմանը, խնդրի ներ-կայացմանը միջազգային բարձրաստիճան պաշտոնյաներին, պետությունների ղեկավարներին, խորհրդարանականներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին և փորձագետներին՝ օգտագործելով ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ համապատասխան ընթացակարգերը:

- Համագործակցությունը մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ) հետ՝ ուղղված Արցախի հայկական մշակութային և կրոնական ժառանգության երաշխավորված պաշտպանությանը:

- Տարածաշրջանային խաղաղության հաստատմանը, խաղաղության օրակարգի առաջմղմանը, տարածաշրջանի ապաշրջափակմանը և կայուն զարգացման պայմանների ապահովմանը:

- Աջակցությանը ցեղասպանության և մարդկության դեմ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման միջազգային ջանքերին, մասնավորապես՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում «Ցեղասպանության կանխարգելում» Հայաստանի կողմից մշակված և երկու տարին մեկ ներկայացվող բանաձևի պարբերական ընդունման ապահովմանը, Ցեղասպանությունների հիշատակման և կանխարգելման միջազգային օրակարգով այլ միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության չորրորդ գլոբալ ֆորումի» կազմակերպմանը:

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման օրակարգի առաջմղմանը՝ Հայաստանի անվտանգության երաշխիքների համակարգի ամրապնդման համատեքստում:

- Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության ամրապնդմանը և Հայաստան-Ռուսաստան երկկողմ համագործակցության օրակարգի ընդլայնմանը բոլոր ուղղություններով, ներառյալ՝ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, հումանիտար, մշակութային ոլորտները:

- Ռուսաստանի հետ ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ և բազմակողմ այլ ձևաչափերում համագործակցության խորացմանը:

- ԵԱՏՄ շրջանակներում նախաձեռնողական և փոխշահավետ համագործակցությանը՝ միտված կառույցի ընձեռած հնարավորությունների առավելագույն կիրառմանը, գործընկեր երկրների հետ առևտրաշրջանառության ծավալների աճին:

- Ակտիվ ներգրավվածությունը ՀԱՊԿ աշխատանքներին, կազմակերպության կառուցակարգերի ամրապնդմանը՝ ի նպաստ անդամ պետությունների և տարածաշրջանային անվտանգության ապահովման:

- Ակտիվ մասնակցությանը ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպության ընթացիկ գործընթացներին, ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

- Հարևան երկրների հետ բարեկամական առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանը, փոխվստահության ամրապնդմանը և շարունակական երկխոսությանը:

- ՀՀ-ԱՄՆ բարեկամական գործընկերության զարգացմանը և խորացմանը, ժողովրդավարական բարեփոխումների, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում փոխգործակցության ընդլայնմանը, տնտեսական և քաղաքական ոլորտներում երկխոսության ակտիվացմանը:

- Ֆրանսիայի Հանրապետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունների ամրապնդմանը և զարգացմանը:

- Եվրոպական երկրների և Եվրոպական միության հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության ընդլայնմանը՝ Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և այլ փաստաթղթերի հիման վրա:

- Եվրոպայի խորհրդում ՀՀ ակտիվ ներգրավվածության և նախաձեռնողական քաղաքականությանը:

- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ կապերի ամրապնդմանը, համագործակցային նոր հարաբերությունների կայացմանը, Ասիական և խաղաօվկիանոսյան այլ երկրների հետ համագործակցության զարգացմանը, այդ թվում՝ համագործակցության բազմակողմ ձևաչափերում:

-Համագործակցության ընդլայնմանը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ներառյալ՝ հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգության ապահովմանը:

-Համագործակցության զարգացմանն ամերիկյան մայրցամաքի պետությունների հետ:

- Ակտիվ համագործակցությանը ՄԱԿ շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների հաղթահարման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց հաղթահարման շուրջ աշխատանքների կազմակերպման առումով:

- Ակտիվ մասնակցությանը ԵԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին՝ ելնելով այն հանգամանքից, որ ԵԱՀԿ-ն տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների հասցեագրման կարևոր հարթակ է:

-Անվտանգության ոլորտի միջազգային երկկողմ համագործակցությանը, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակականությանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը:

- Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

-Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը:

-Հանրային արդյունավետ դիվանագիտության իրագործմանը՝ միջազգային ասպարեզում Հայաստանի դրական կերպարի ձևավորման, Հայաստանի մշակութային և պատմական ժառանգության հանրահռչակման, հակահայկական քարոզչության հակազդման նպատակով:

-Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանը և խորացմանը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության ոլորտային ծախսային ծրագրերն են.

<u>Ծրագիր</u> <u>1050</u>

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Ծրագիրն իրականացնում է դիվանագիտական ծառայության համալրում նոր և որակյալ մասնագետներով, պետական ծառայության, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների վերապատրաստում, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների բարելավում և նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացում:

Միջոցառում 11001. **Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում**

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցն իրականացնում է հետևյալ ամենամյա ծրագրերը. 1. «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամսյա ծրագիրը (տարեկան շրջանավարտների թիվը տատանվել է 16-ից 32-ի սահմաններում), 2011 թվականից՝ նաև 2. «Հյուպատոսական գործունեություն» մեկամսյա ծրագիրը (տարեկան մասնակիցների թիվը՝ 9-16), 2014 թվականից՝ նաև 3. «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման» երկուս և կես ամսյա ծրագիրը (տարեկան 20-24 մասնակիցներ), և 2017թ-ից՝ նաև 4. լրագրողների վերապատրաստման դասընթացը (8-12 մասնակիցներ):

2021 թվականից Դիվանագիտական դպրոցն իրականացնում է նաև օտար լեզուների, ինչպես նաև օտարերկրյա դիվանագետների վերապատրաստման դասընթացներ:

ԾՐԱԳԻՐ 1061 - **Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակում և իրականացում**

Արտաքին գործերի նախարարությունը, համաձայն ԱԳՆ կանոնադրության (11 հունիսի 2018 թվական, N 746 – Լ), արտաքին գործերի բնագավառում մշակում է ՀՀ կառավարության քաղաքականությունը և իրականացում այն՝ կազմակերպելով ՀՀ դիվանագիտական ծառայությունը արտերկրում, պահպանելով կապը ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, մատուցելով հյուպատոսական ծառայություններ:

ՀՀ արտաքին քաղաքականության նպատակներն են ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացումը, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցության խթանումը:

Միջոցառում 11001 **– Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում**

Միջոցառման շրջանակում ապահովվում է ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի գործունեությունը:

Միջոցառում 11002 **– ՀՀ մուտքի վիզաների՝ վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում**

ՀՀ մուտքի վիզաները տրամադրվում են երկու եղանակով. պիտակի տեսքով՝ ՀՀ սահմանակետերում և ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում, էլեկտրոնային՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից:

<u>Ծրագիր</u> <u>1118</u>

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Ծրագրի շրջանակում ԱԳՆ ապահովում է ՀՀ մասնակցությունը բազմակողմ միջազգային համագործակցության ձևաչափերում: ՀՀ անդամակցությունը միջազգային կառույցներին ենթադրում է անդամակցության հետ կապված ֆինանսական պարտավորությունների պատշաճ իրականացում:
Ծրագրի նպատակը միջազգային համագործակցության բազմակող ձևաչափերում ՀՀ ակտիվ ներգրավվածության միջոցով ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունների իրականացումն է:

Միջոցառում 12001. **Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ**
Միջոցառման նպատակն է միջազային կազմակերպությունների աշխատանքներին ՀՀ մասնակցության, երկրում նրանց կողմից տարբեր ծրագրերի իրականացման ապահովումը: Հայաստանը անդամավճար է փոխանցում 109 միջազգային կազմակերպության և ծրագրերի/կոնվենցիաների: Փոխանցումները կատարվում են հաստատված ժամանակացույցով:

Միջոցառում 12002. **ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում**
Հայաստանում ՆԱՏՕ-ի Տեղեկատվական կենտրոնը հիմնվել է Տրանսատլանտյան Նախաձեռնությունների հայկական կենտրոնի տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից: Հայաստանում ՆԱՏՕ-ի Տեղեկատվական կենտրոն հիմնելու մասին դրույթն ամրագրված է ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրում /ԱԳԳԾ/: Կենտրոնի հիմնական նպատակներն են Հյուսիսատլանտյան դաշինքի գործունեության մասին տեղեկատվության տարածումը և ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցության ներկայացումը: Կենտրոնի տարածքի վարձակալության ծախսերը՝ տարեկան 9600.0 հազ. դրամի չափով հոգում է ՀՀ կառավարությունը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

<u>Ծրագիր</u> <u>1128</u>
Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում
Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով (դեսպանություններ, գլխավոր հյուպատոսություններ, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչություններ) ապահովում է երկկողմ և բազմակողմ արտաքին կապերի պահպանումը, զարգացումը, ՀՀ դիրքորոշումների, շահերի ներկայացումը և պաշտպանությունը օտարերկրյա պետությունների հետ երկկողմ

հարաբերություններում, միջազգային կազմակերպությունների շրջանակում, մատուցում է հյուպատոսական ծառայություններ:

Միջոցառում 11001. **Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում**

Միջոցառման նպատակն է օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական գործունեության միջոցով արտաքին գործերի բնագավառում ՀՀ Կառավարության արտաքին քաղաքականության իրականացումը, հյուպատոսական ծառայությունների մատուցումը:

Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել աշխարհի 178 երկրների հետ, արտերկրում ՀՀ-ն ունի 42 ռեզիդենտ դեսպան, ովքեր հավատարմագրված են ընդհանուր առմամբ 79 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 11 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են 10 ՀՀ գլխավոր հյուպատոսություն, 2 հյուպատոսական գրասենյակ:

Միջոցառում 12001. **ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում**

ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի կառուցման հետ կապված ծախսերի հիմնական մասը ՆԱՏՕ-ն իրականացրել է պայմանով, որ դրանք վարձակալների կողմից կմարվեն 2017 թվականից սկսած:

Միջոցառում 31001. **Արտերկրում ՀՀ դեսպանությունների շենքային պայմանների ապահովում**

Արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերի մեծ մասը կապիտալ նորոգման կարիք ունի: Առավել հրատապ են հյուպատոսական բաժինների, քաղաքացիների ընդունելության սրահների նորոգման աշխատանքները: Առաջարկվում է հատկացնել միջոցներ նորոգման աշխատանքների համար:

Հարկ է նշել, որ հաճախ ֆինանսական առումով առավել նպատակահարմար է ծառայողական շենքերը ոչ թե վարձակալել, այլ գնել հիփոթեքային վարկով և վարկի մարումից հետո տվյալ անշարժ գույքը տնօրինել սեփականության իրավունքով:

Հետևաբար առաջարկվում է 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակում քննարկել յուրաքանչյուր տարի դիվանագիտական երկու ներկայացուցչությունում անշարժ գույքի ձեռքբերման հնարավորությունը:

<u>Ծրագիր</u> <u>1178</u>

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

Ծրագրի շրջանակում ԱԳՆ արարողակարգի պետական ծառայությունը միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումներ է կազմակերպում և իրականացում ՀՀ-ում և արտերկրում:

Միջոցառում 11001. **Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում**

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայությունն իր հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, փոխվարչապետների և ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ ՀՀ–ում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների, օտարերկրյա պետությունների, կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների ու նրանց ուղեկցող անձանց Հայաստանի Հանրապետություն այցերի պատշաճ մակարդակով նախապատրաստումն ու իրականացումը: Ծառայության գործառույթների շրջանակում են նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների հետ դիվանագիտական արարողակարգային գրագրության իրականացումը, աշխատանքային և արարողակարգային հանդիպումների կազմակերպումը, դիվանագիտական անձնակազմի անձեռնմխելիության և արտոնությունների հետ կապված հարցերի կարգավորումը, օտարերկրյա և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ տարվող արարողակարգային աշխատանքները, դրանց ղեկավարների հավատարմագրման և պարտականությունների ստանձման գործընթացները, ինչպես նաև ՀՀ Նախագահի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ պետական միջոցառումների /ապրիլի 24, մայիսի 9, սեպտեմբերի 21 և այլն/ կազմակերպումը և անցկացումը: